XXIII

ՆՈՐ-ԴԱՐ

XXIII

№ 63 Կիրակի, 16 Ապրիլի

1883 – 1906

Կիրակի, 16 Ապրիլի № 63

Բաժանորդագինը պռոտի ծախքով տարեկան 10 ր., վեց ամիսը՝ 6 ր., ամիսը 1 ր., հատով՝ 5 կ.։
Բաժանորդ են գրւում Թիֆլիսում՝ միմիայն խմբագրատունը։
Խմբագրութեան գրասենեակը՝ Դրիբոեդովսկայա փողոց, տուն № 14.

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis (Caucase), Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի մօտ օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բաւական 2 կ., ռեկլամների համար առանձին համաձայնութեամբ։ Առաջին երեսում յայտարար. վճարը՝ կրկնապատիկ է։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԱՌԱՋՆՈՐԴՈՂՆԵՐ.—Պետական Դուման։ Մաքուր... դիտողութիւն նրա։ «Նոր-Դար»-ի ընթերցողներին։ Վերջին հեռագրեր։ ՔՐՈՆԻԿՈՆ.—Թիֆլիս։ Գաւառ։ Ռուսիա։ Մեզ գրում են.—Ախալքալաքից։ Դերբենտից։ Գիւղատնտեսութեան վիճակը մեզանում և էջմիածնի բանվոր ուղղութիւնը։ Հայկական օգտակար անդրաժեշտութիւնը մայրաքաղաքում։ «Ծերացական բժիշկների միջազգային միութիւնը ընդդէմ պատերազմի»։ Բերքա Սուսների նամակը։ Տղմատութեան հետևանք։ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ. — Հայ-Գիւղագետաց Դերբենտում։ Նամակներ խմբագրութեան։ Թեր են Դէմ։ ՅԱՏՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։

Թիֆլիս, 15 ապրիլի 1906 թ.

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱ

Մօտենում է Պետական Դուման, ռուսական առաջին պարլամենտը, բացման ժամանակը համաձայն Բարձրագոյն որոշման։ Ընտրութիւնները արդէն կատարուել են գրեթէ ամեն ուրեք և կատարելու վրայ են։ Մեր երկրումն էլ պիտի կատարուեն պատգամաւորների ընտրութիւնները թնդանօթների և սուիների հովանաւորութեան տակ։ Բայց ինչ կերպ էլ որ կատարուելու լինեն ընտրութիւնները, իբրև առաջին փորձ, չեն կարող մօտաւորապէս գոնէ կատարեալ լինել և մեզ հայերիս էլ օգտաւէտ, քանի որ հայոց կողմից յատուկ պատգամաւոր չէ ընտրւում. և եթէ ընտրուածը ծագումով հայ էլ լինի, դեռ այդ ապացոյց չէ, որ նա հոգով և մտքով էլ հայ է. և վերջապէս ինչպէս կարող է հայոց համար պարլամենտի մէջ մի կամ երկու ձայնը բան շինել։ Ուստի, հանգամանքների առաջ խոնարհուելով, բաւական է, որ ընտրուածը հայատեաց չլինի, գոնէ ընդհանուր ազատութեան, սահմանադրական սկզբունքների դաւանող լինի։

Մեզ համար այս առաջին պարլամենտում ռուսները, շատ էլ որ կամենան, մի առանձին բան չը պիտի կարողանան անել։ Ո՞րտեղից. նրանք դեռ իրենց սեպհական ցաւերն ունեն, որոնցով պիտի ապրեն և որոնց համար կռիւ մղեն։

Հարցմունք. բացուելու է պարլամենտը. և եթէ բացուի էլ դեռ պէտք է որոշուի, թէ պարլամենտը միմիայն նրա համար է, որ պէտի առանց իրեն կատարուածները և որոշուածները վաւերացնէ և սպասէ, թէ ուրիշ ինչ հրամաններ կան լսելու, թէ՞ նա՝ պարլամենտն է երկրի տէրը և գործերը կարգադրողը։

Պարլամենտի բացումից յետոյ ամբողջ կայսրութեան բողոքը կախուած է այն հանգամանքից, թէ որ ատիճանի հեռատեսութեամբ շարժուելով այժմեան միջնորդութիւնը կաշխատէ շատ դիմումներ անել պարլամենտին, իսկ այս վերջինս իւր այժերը կշռելով կըզտնէ այն տեղը, որտեղ պէտք է կանգ առնել, և կըվանդնի։

Տիրող ռեժիմի կատարածները բից և այս վերջին, պարլամենտի բացման նախօրեակին, արած փոխառութիւնից չէ երևում դրժբաղդաբար, որ այժմեան Վիտէ-Դուրնովոյի մինիստրութիւնը ամանդրութեանը լրջութեամբ լինի վերաբերւում կամ ժողովրդի ներկայացուցիչներին բանի տեղ դնում լինի։

Այդ Վիտէն իսկապէս մի պատուհաս էր և ռուսաց ազգի համար. ռուսաց գօրքի պարտութեան վրայ հիմնուած՝ կարողացաւ զրաւել նա այն՝ տեղը, որ Միլրոկուց առաջ և Միլրոկու միջոցին աշխատում էր զրաւել, բայց գոները փակ էին նրա համար։ Այն պատերազմը, որի ներքին և բուն պատճառն ինքն է եղել, և որը տարաւ Ռուսիային Յապանիա, հէնց դրա շնորհիւ նա Ռուսիան առաջնորդում է աւելի մեծ քամբաղդութիւնների։

Ամենից աւելի մենք կուրախանանք, եթէ սխալուած լինենք, իսկ այժմս այդ ուրախութիւնը վայելում են Պարիզի, Բերլինի և առհասարակ համաշխարհային բորսաները։

Ռուսիան յեղափոխութեան մէջ է և այդ յեղափոխութիւնը քրոնիկական բնաւորութիւն է ստացել։ Ուրիշ կերպ էլ չի կարող լինել, քանի որ տասնեակ տարիներ Ռուսիայում արհեստական բոնի միջոցներով ճնշուել է ազատագրական շարժումը և տեղ-տեղ էլ անբնական դրութիւն. ռուսները գնում և արիւն էին թափում Բալկանեան թերակղզու ազգերին տալիս ազատութիւն, այնինչ այն՝ ինչ որ իրենք չունէին։

Սրանից էլ անբնական երևոյթ։ Հոկտեմբերի մանիֆեստից առաջ և մանիֆեստից յետոյ էլ Ռուսիան իսկապէս երկու բանակի է բաժանուած՝—կառավարութիւն և ժողովուրդ, որ միմեանց թշնամանում են։

Մինչև որ այդ երկուսը մէկ չդառնայ, մինչև որ գրանք հոմանիշ չլինեն, մինչև որ կառավարութիւն և ժողովուրդ մէկ չը լինեն և ինքը կառավարութիւնը ժողովուրդ չլինի և այդ ժողովուրդը իւր ճակատագրի որոշողը, Ռուսիայից ամեն բան կարելի է սպասել, բայց ոչ խաղաղ, կուլտուրական զարգացում։

Այն հանգամանքը, որ կառավարութեան ահռելի ապրանքը կարող է ջնասել Դաւոյքին, և ընդհակառակը՝ նրա ապահովութիւնը և բարձրութիւնն ինքնակալութեան մէջ է,—դա մի մեծ սխալ է, որ աշխատում է հաւատացնել հին ռեժիմը։

Սահմանադրական և սոցիալ-դեմոկրատական տարբերութիւնը նրա մէջն է, որ թագաւորը, իբրև թէ ինքնակալ, իսկապէս կատարում է մի խումբ մարդկանց, մի քանի անցաւորի կամքը, իսկ սահմանադրական թագաւորը կատարում է ամբողջ հարիւր միլիոն ժողովրդի կամքը։

Դժուար չէ այսօրէն ըմբռնել, թէ ո՞րն է աւելի բարձրը, աւելի լաւը գահոյքի և նրա ապահովութեան, փառքի և մեծութեան համար։

Թիֆլիս, 15 ապրիլի 1906 թ.

ՄՏՔԵՐ...

ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Բազմիցս կրկնած և ընդհանուրին ծանօթ ճշմարտութիւն յայտնած կը լինէնք, եթէ ասէինք, որ ոչ մի հաստատութիւն, որքան էլ հաստատուն հիմքի վրայ կանգնեցրած և լաւ կազմակերպուած լինի, չի կարող իւր կոչման բարձրութեան վրայ մընալ, պէտք է որ կազմալուծուի, ի վերջոյ ընկնի, եթէ հաստատութիւնը պահպանող օրէնքը զանցառութեան է ենթում, եթէ կարգապահութիւնը դրա մէջ կաղում է։

Այդ ճշմարտութեան վրայ մենք շեշտում ենք ի նկատի առնելով մեր եկեղեցական կեանքում և հոգևորականների աշխարհում վերջերս օրէնքի և կարգապահութեան դէմ կատարուող դէպքերը։

Ալէքսանդրոպոլի նոր նշանակուած յայրարի դէպքը գալիս է ցոյց տալու մեզ, թէ մեր հոգևոր իշխանութեան և առհասարակ Եկեղեցու մէջ ինչ աստիճանի թուլացել է կարգապահութիւնը, եթէ աւելին չասենք։

Կան մարդիկ, կան և թերթեր, որոնք յիշեալ վարդապետին պաշտպանում են. կան և մարդիկ, որոնք չարաչար գոռգոռարտում են նրա արարքը։ Վերջին տեսակի շատ յօդուածներ ենք ստացել, բայց դրեթէ բոլորը ճնաջել են չտպուած։

Մենք չենք ուզում քննութեան առնել, թէ ինչ է դրել էջմիածնի մի մլութան վարդապետ սիրողին և ինչ ձևով և ինչ լեզուով։ Չենք ուզում և քննել սիրողի վերաբերմունքը դէպի այդ վարդապետը և նրա արարքը։

Ընթերցող հասարակութեան միաքն աւելորդ տեղը չծանրաբեռնելու համար կը ցանկայինք, որ նա մեզ հետ ընդունէր, թէ սիրողը խիստ է վարուել։

Բայց ի՞նչ է ասում հայը, երբ տեսնում է, որ իւր Հայրապետի ս. կոնդակը խեղճուկ է կոչւում.., որ մի վարդապետ լինքը վիժում է ամենայն հայոց Հայրապետին և արհամարհական խօսքերով դէն է շպրտում իւր վեզարը և հրաժարւում է հոգևոր կոչումից։

Կարծում ենք, որ այդտեղ վարդապետը կարգապահութեան, օրէնքի, եկեղեցու դէմ չարաչար մեղանչել է և յանցաւոր է։

Բայց և այնպէս կատարւում է այն, ինչ որ անկարելի պիտի համարուէր՝ թէկուզ յանցաւորն անկեղծութեամբ ղղջար իւր արարքը և քաւէր իւր մեղքը. վեզարը դէն շպրտուն և իւր Հայրապետի ս. կոնդակը հեզնողը նորից շարունակում է կրել իւր՝ դէն շպրտած վեզարը և կատարել իւր գործը։

Այսպիսի տպորմելի և անպատուաբեր զրութիւնը որոշում է եկեղեցու մէջ գոյութիւն ունեցող կազմակերպութիւնը, որից անշուշտ Եկեղեցին չարաչար տուժում է և պիտի տուժէ։

Այնուամենայնիւ յանցաւոր վարդապետի արարքը գատապարտելով՝ նրա անձի դէմ մենք ոչինչ չունինք ասելու, մենք նրբան այնքան մեզաւոր չենք համարում և ոչ էլ իւր արարքի միակ պատասխանատուն։

Նրա յանցանքն ինչքան էլ ծանր լինի, նա մարդ է, մի անհատ՝ և՛ սխալանքի, և՛ կազմակի դերութիւնների ենթարկուող. նա գոհ է իրեն շրջապատող մթնոլորտի, որոշ սխառեմի, որոշ ոչ-ժիմի. նա հոյոց հիւանդոտ կեանքի՝ արդիւնք սիմդոմն է։ Ցանցաւոր է վարդապետը, բայց աւելի յանցաւոր է Ալէքսանդրոպոլի հասարակութիւնը. յանցանքի աւելի մեծ մասն ընկնում է էջմիածնի միաբանութեան, հոգևոր բարձր իշխանութեան վրայ, որը կոչուած է բարձր պահելու եկեղեցու, օրէնքի կատարման և կարգապահութեան վրայ խստութեամբ հսկելու։

Կարգազանցութեան և ըմբռնութեան սկիզբը դրին մեր այժմեան Հայրապետի գահակալութեան հէնց առաջին տարին երկու եպիսկոպոսներ, որոնք հրաւէրի էին ստացել ի սէր պրոկուրորի կատարած «գործերով»։

Այդ եպիսկոպոսները չպատժուեցին, այլ վարձատրուեցին։

Ուրեմն չպէտք է զարմանանք, որ «բարի օրինակին» հետևողներ են լինում, մանաւանդ հայոց մէջ, որոնց մէջ ուրիշին նմանուելու սէրը խիստ ընդունուած է։

Որ կարգազանցներն, օրինազանցներն, ըմբռնողները չեն պատժւում, բացառութիւն է նրանով, որ մեր ազգի Հայրապետը «բարի է և պատժել չգիտէ»։

Այս խօսքը հոգևորականներն իսկ կրկնում են, և հոլովւում է շատ տեսակ։

Այդ բարութեան էինք պատրաստական, որ քիչ էր մնում Սևանի վանքի Տիրամօր պատկերը վերադիր վճարով ընկնէր Աչքիտիկ ծովը։ Այդ բարութեան ենք պարտական, որ մի հատարակ չինովնիկ՝ պրոկուրոր հանգրձակում էր մինչև անդամ «Կաւկազ» թերթում հայոց Հայրապետի դէմ գրելու, իսկ իշխան Գոլիցինը վարւում էր ամենայն հայոց Կաթողիկոսի հետ այնպէս, ինչպէս մի իրեն սաղրադրեալ նահանգապետի, գաւառապետի հետ, իրեն յատուկ կոպտութեամբ, մինչ այն աստիճանի, որ ինքն Հայրապետն ասում էր՝ «կըկարծէ, թէ իւր դիմացինը սոլդատ մըն է»...

Այդ բարութեան ենք պարտական և այն, որ մի Վաստորգով հայոց Եկեղեցու դէմ զօրեղապէս պրոպագանդա անելու դիտաւորութեամբ կարողացել էր ս. Լուսաւորչի նշխարից մի կտոր առանալու խոստումն կորզել և մի Մաչիկ վարդապետ յանուն պերճասիրների ս. էջմիածնի հիմնարկութիւնը տեղափոխում էր մի ուրիշ տեղ ամբողջ ազգի պատմութիւնը գլխի վրայ շուռ տալով, որպէսզի այդ «պատմական առաքելութեամբ» ծաւալած լինի հայոց ազգային եկեղեցու դէմ պրոպագանդայի միաւորիչներին։

Այդ բարութիւնը և պատժել չիմանալը հասցրեց մեր ազգը և եկեղեցին այսօրուայ դրութեան։ Ս. էջմիածինը լռել է, միաբանութիւնը պատգիծուել. նրա բերան «Արարատ»-ը Զաքարիայի լռութիւն է պահպանում։ Դուրս են եկել քահանաներ, հովիւներ արեան և աւերի օրերին, չգիտես ինչպէս և արտերից հայոց եկեղեցին ոտից մինչև գլուխ վերանորոգել են ուզում, որովհետև մեր եկեղեցին «քարացած է», որովհետև «եկեղեցին ժողովրդի համար է և ոչ թէ ժողովուրդը եկեղեցու համար» և այդ հովիւները կռուելով մեր «հոգևոր իշխանութեան բիւրոկրատիկական ոեժիմի դէմ» աշխատում են ժողովրդի համար, միմիայն ժողովրդի համար, ինչպէս ամենը, ինչպէս կռնատբրանների կոկարդատար մինները ժողովրդի և միմիայն ժողովրդի համար։

Որպէսզի Եկեղեցին «քարացած դրութիւնից» ազատուի և ժողովրդին ծառայէ, անհրաժեշտ է, որ, կրկնում ենք, այս արեան և աւերին, բացի ուրիշ շատ բաներից, որվերաբերում քահանաներին դրանք թատրոն չամախեն և այրիացած քահանաները նորից կին ուզեն։

Այս վերջին պահանջը պարտադրում են և բժիշկները, բժշկական առողջապահական, բարոյական տեսակէտներից և շտապեցնում են... այլապէս Լուրն եկել է մեզ տարել։ Բանն այնտեղ է հասել, որ Թիֆլիսի գաբարները ս. էջմիածին հեռագրել են տալիս թէ մեր այրիացած քահանաներին թոյլ տուէք, որ պսակուեն։ Շուտ, շուտ։

Մարդ չի հասկանում, թէ ինչ կապ կայ այրիացած քահանաների և մոլթի մարդու դաբադների միջև ինչպիսի հոգատարութեան դրանց կողմից. սա ինչ մոցիքուլութիւն է. ասենք թէ մատաղի մարթի կարող են դրանք ձեռք բերել քահանաներից, բայց որ այրիացած քահանաների համար միջամտողները դաբադներն են,—դա աւելի քան մեր կեանքի հիւանդոտ դրութեան ապացոյցն է։

Քահանաներին թատրոն յաճախելու, նորից պսակուելու խնդիրների մասին մենք աւելորդ ենք համարում այժմ խօսելու. այդպիսի և նման խնդիրներ և պահանջներ որ քահանաները հրապարակի վրայ են դնում և իրենք որոշում են մեծ ապլոմբով, փոխանակ հոգևոր իշխանութեանը դիմելու և նրա որոշմանը սպասելու,—դարձեալ ապացոյց է, թէ ինչ վիճակի մէջ է կարգապահութիւնը։

Եկեղեցուն և կրօնին վերաբերեալ խնդիրներում կարծում ենք, որ Եկեղեցու պաշտօնեաները չպէտք է ի չարը գործ դնեն խօսքի ազատութիւնը։

Հազար տարիներ գոյութիւն ունեցող եկեղեցական օրէնքներ, կարգեր, ծէսեր և աւանդութիւններ չի կարելի թեթևամտութեամբ շուռ տալ ապաւինելով միմիայն ժամանակի քամուն։

Ինքն ամենայն հայոց Կաթողիկոսն իսկ չի կարող որոշումն անել, ապա այդպիսի եկեղեցական, կրօնական և նման խնդիրների որոշումը մեր գործը չէ. մենք միայն կարող ենք հպատակել եկեղեցական կանոնաւոր ժողովի որոշումներին։

Իսկ մեր կողմից, չերկարելու համար, կասենք, որ, մեր կարծիքով, թէ քահանաները և թէ բժիշկները արծարծուած խնդրի վերաբերութեամբ սխալ ճանապարհով են ընթացել։ Քահանաները միմիայն իրենց անձը և և իրենց անձնականն են նկատել ի նկատի, իսկ բժիշկները և այլք առողջապահական, բարոյական և այլ տեսակէտները. գրանք ամենազլխաւորը մոռացել են, այն է՝ եկեղեցու օրէնքների և շահերի տեսակէտը։

Մեր եկեղեցին առաջ պահել է տալիս մարդուն, յետոյ նրան քահանայ ձեռնադրում, Արդ՝ օծուած, ձեռնադրուած քահանան թէ ինչպէս է նորից պահւում, այդ հարցը կը վճռի երևի եկեղեցական ժողովը, իսկ մենք կը լուծենք խնդիրը շատ կարճ. այրիացած քահանան, եթէ նորից պահել է ուզում, թող հանէ փարաջան և գնայ պահուի։

Եթէ իւրաքանչիւր մարդ որոշ գործի, որով պաշտօնի համար պէտքէ զոհաբերութիւն անէ, առաւել ևս հոգևորականը. եթէ նրա մէջ անասնական բնազդը զօրեղ է, չի կարող իրեն զրկել, չի կարող ժուժկալ լինել, նա ինչ հոգևորական է, և ինչ է կորցնում եկեղեցին, որ այդպիսին օր առաջ հեռանայ... և ինչ ցաւ զարձան քահանաները մեզ համար, որ նրանց անասնական բնազդների համար էլ ժողովուրդը, եկեղեցին պիտի հոգայ։

Եթէ եկեղեցին ժողովրդի համար է, ձեմ համար ին քահանաները։

Եթէ բարոյականութիւնը պահպանելու պատճառաբանութեամբ պէտք է թոյլ տալ, որ քահանաները նորից ամուսնանան, այն ժամանակ խնդիր է ծագում, որ եթէ երէցկինը շատ տգեղ է, էլ չէ դուր գալիս եղ կտրած քահանայ-ամուսնուն կամ կինը շատ ակար է, կամ դա էլ իւր ճանապարհն է գտել, և առաջ է գալիս ամուսնալուծութեան, պահարագանի խնդիր և այլ նման նոր խնդիրներ և դրութիւններ, այդ դէպքում ինչպէս անենք... Այսպէս՝ երբ շէնքի մի անկիւնի աղիւսը հանում ես, մէկ էլ տեսար՝ հետզհետէ թափուեցին շատ աղիւսներ. երևի մեր նահապետները մի ... [illegible] և շատ մտածել են, որ այդպէս են սահմանել... Պէտք է թողնել այդպիսի խնդրի որոշումը եկեղեցական ժողովին։

Նոյնը կարող ենք ասել և թատրոն յաճախելու մասին. ինչու չէ, համեցէք։ Մենք դեռ աւելին կը տանք քահանաներին. ոչ թէ թատրոն, այլ նրանք կարող են գնալ իրենց առաքելութիւնը կատարելու և այնպիսի հասատատութիւնների մէջ, որոնց անունն ընդունուած չէ յիշելու. ամեն տեղ կուզարկէինք մենք քահանաներին վատահութեամբ, եթէ նրանք հոգևորական լինէին. քանի քահանաներ ունինք, որոնք հոգևորական են, որոնք... վերջացնենք և վերջը կապենք սկզբի հետ։

Օրէնքի տեղ՝ օրինազանցութիւն, կարգապահութեան տեղ՝ կարգազանցութիւն և օրհեղ ձգտումն փոխելու ամեն ինչ, ինչպէս կուզէ լինի՝ թող քանդուի, միայն թէ փոխուի։

Այն ինչ՝ մենք այն համոզմունքին ենք, որ եթէ մի բան փոխուում է, պէտք է աւելի դէպի լաւը փոխուի. ունեցածը ձեռքից չը պէտք է թողնել նորը ստանալու յոյսով միայն։

Ցաւալի է, յոյժ ցաւալի, որ մեր ամեն գործերում մենք ամենքս, աշխարհական թէ հոգևորական, ներկայի մօտ ապագայի վրայ շատ քիչ ենք մտածում, անձի մօտ մոռանում ենք կոչումը և պաշտօնէի մօտ չենք տեսնում պաշտօնը։

Այն միտքը, թէ մեր Հայրապետը բարի է, պատժել չգիտէ, և մենք հաշուում ենք այդ մըտքի հետ,—դա շատ ցաւալի է. ըստ ամենայնի ցոյց է տալիս, որ միայն Հայրապետ ենք տեսնում մենք և Հայրապետութիւն չենք տեսնում։

Եթէ այդպէս չլինէր, մենք պիտի ասէինք, որ մեր Հայրապետը կարող է ներել, բայց մենք չենք թոյլ տալ, որ մէկն ու մէկն ըմբռնութեամբ մեր Հայրապետի դէմ, վիրաւորի Հայրապետութիւնը։

Մենք կասէինք. Վեհափառ Տէր, մենք, Ձո որդիքը, ամենախոնարհաբար խնդրում ենք գործ դիր Ձո իրաւունքը. Դու ազգինդիր Կաթողիկոս ես, Դու Հայոց Եկեղեցու օծեալ Պետն ես. համաձայն Ձո երդման պահպանիր ազգը և եկեղեցին. մենք խոնարհւում ենք պատկառելով ազգիս Կաթողիկոսի առաջ, բայց խմացիր, որ, ճիշտ է, թանկ է մեզ համար Հայրապետը, բայց Հայրապետութիւնն աւելի թանկ է մեզ համար։

Մենք խոնարհում ենք էջմիածնի Սիմոնի առաջ մեր գլուխները և որպիսին ջերմ զգացումներով համբուրում Սիմոնականի ս. աչքը. բայց մեզ համար թանկ է և աւելի բարձր ս. էջմիածնի Սիմոնը։

Պահպանիր, վեհափառ, այս գրուած և անօրինակ դրութեան մէջ տառապող ազգը. թող գարթնի քնից էջմիածնի միաբանութիւնը և շրջապատէ իւր վեհին. թող ազգիս Հայրապետը, յենուելով իւր իրաւունքների և պարտաւորութիւնների վրայ, բարձրացնէ իւր օրհնութեան, միութեան և յաւատարութեան նզոր ձայնը հրաւիրելով ի միաբութիւն, պատժելով յանցաւորին, կարգի բերելով սխալուողներին, մոլորեալներին։

Մենք յոյսով ենք և հաւատացած, որ հայ ժողովուրդը կրկսէ իւր Հայրապետի ձայնը, հաւատայն և զօրեղ ձայնը։

ՎՐԻՊԱԿ.—«Նոր-Դար»-ի № 62-րդի առաջնորդողում լոյս է տեսել՝ «Հայը... պիտի հալածուի իւր ընտրը, աչք ծակող յաջողութիւների շնորհիւ»։ Պէտք է կարդալ՝ «...աչք ծակող յաջողութիւնների և պակասութիւնների շնորհիւ»։

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԻՆ

—

Տատանուելուց, վերջին րոպէին որոշեցի «Նոր-Դար»-ի հրատարակութիւնը դադարացնել ժամանակաւորապէս։

Նիւթական վնասները և այլ բազմաթիւ նեղութիւնները կարող էի տանել, ինչպէս և միշտ տարել եմ, բայց խաղալիք դառնալ նոյն իսկ խամ, անփորձ գրաշարների ձեռքին և գործել զժոխքի մէջ, այդ այլևս չեմ կարող տանել։

Ի՞նչ միաք ունի հետագային ծախքեր անել, հոգի, միաք մաշել, սպասել, որ երկու սրբագրիչ գիշերը լուացնեն տպարանում և յետոյ թերթը լոյս չտեսնի կամ միշտ ուշ լոյս տեսնի (որով և խափանւում է հատով վաճառումը և միանգամից ցամաքում թերթի եկամտի աղբիւրը), լիքը սխալներով, հերթական յայտարարութիւնները, հեռագրները չշարուած և դրանց տեղը վերջացած յայտարարութիւններ դրած։

Անցեալ տարի հէնց որ թերթի հրատարակութիւնը պիտի վերսկսուէր, նշանակած օրը թերթը շարելու գործի գլուխ անցան երկու գրաշար, որոնց հետ ոչ խօսել և ոչ կապուել էի. նրանք, որոնց հետ որ պայման էի կապել, չերևացին. նրանց տարել էին... ես սպասած գործը ձգեցի անծանօթ մարդկանց ձեռքը։ Որպէսզի սկսածը չընդհատուի, էլ գործն ուզիլ կարելի չեղաւ, մնացածը լրացրին քրոնիկական գարձած գործազուլները, գների արհեստական բարձրացումը. մարդիկ սովորեցին փող սանալ, իսկ գործը երեսի վրայ ձգել։

Ինքս ամենքին ծառայելով՝ վերջին ցրիչից սկսած մինչև թերթի դիկտատութեան և առաջնորդների հոգսերն ինձ վրայ լինելով, առաւօտուից մինչև գիշերն ամենևին հանգիստ չտանելով դիմումներից, պահանջներից, գրաշարների արշաւանքներից, վարչութեան ամեն գործի հոգայգուքիչներ, կանխաւ իսկ փոքր հատցնելու հոգսը, խմբագրութեան, պոստի հոգսերը բոլորն ինձ վրայ լինելով, նոյն իսկ օրւայ ժամը 4—5-ին, դաղրած, վրդովուած, առաջնորդող գրելիս երբէք ապահովուած չեմ եղել դիմումներից, պահանջներից, վիրաւորանքից։

Եւ այս ամենից յետոյ, ամենքի համար հոգալուց յետոյ՝ գործը կատում է, և մարդիկ զանգատաւոր են։

Այդ ամենի բուն պատճառն այն է, որ լրագիրն ինչպէս առաջ սկզբից՝ այժմս էլ լոյս է տեսնում տնտեսարի, մէկ մարդու վրայ է ծանրացած ամեն բան և ամեն հոգս։ Այդ բոլոր տանել, համարձակ կարող եմ ասել, ոչ ոք յանձնառու չի լինել և աւելացնեմ, չի

Շուրջ ու մերձակայքում ամեն ինչ ծաղկում է, ամեն ինչ ուրախ է, միայն Ալիշանի ծոցում ամեն ինչ մեռած է, ամեն ինչ տխուր է։ Ալիշանի ծոցը ամայի է, ամայի է նաև ամառանոցների շարքը, որ ձգվում է ծոցի ափերով։ Ամառանոցները ևս ամայի են, ամայի են նաև ամառանոցների մոտ գտնվող պարտեզները։ Ամայի են, որովհետև ամառանոցների տերերը դեռ չեն հասել։ Նրանք դեռ Պետերբուրգում են, Մոսկվայում, Կիսլովոդսկում, Եվրոպայում, Կովկասում, Ղրիմում, Ֆինլանդիայում, Ռիվիերայում, Վենետիկում, Նիցցայում, Մոնտե-Կառլոյում, Վիշիում, Կարլսբադում, Վիեննայում, Բեռլինում, Փարիզում, Լոնդոնում, Ալպյան լեռներում, Ռուսաստանի ամենատարբեր կողմերում, ամենատարբեր ջրերում, ամենատարբեր ծովերում, ամենատարբեր գետերում, ամենատարբեր լճերում, ամենատարբեր ճահիճներում, ամենատարբեր անտառներում, ամենատարբեր անապատներում, ամենատարբեր ամենատարբեր տեղերում։ Ամառանոցների տերերը դեռ չեն հասել, որովհետև ամառանոցների տերերը դեռ չեն ամառել։ Ամառանոցների տերերը դեռ չեն ամառել, որովհետև ամառանոցների տերերը դեռ չեն հասել

բերքահավաքի ժամանակ։ Ամեն տարի ամռանը մեր գյուղերում հավաքվում են հարյուրավոր բանվորներ, որոնք գալիս են հեռավոր գավառներից, ինչպես օրինակ՝ Ղարաբաղից, Ղազախից, Ելիզավետպոլից, Ղարսից, Ալեքսանդրապոլից և այլն։ Նրանք գալիս են գնացքով, ուրեմն ճանապարհի վրա ծախսում են մի քանի ռուբլի։ Ամեն մի բանվոր ունի իր ուտելիքը, որ նա պատրաստում է տանը։ Ուրեմն նրանք ոչ մի կոպեկ չեն ծախսում ճանապարհին։ Գյուղում նրանք ստանում են օրական 1 ռուբլի 50 կոպեկ, ուրեմն 3 շաբաթում կարող են վաստակել 10 ռուբլի։ Ամեն մի բանվոր ունի իր ուտելիքը, որ նա պատրաստում է տանը։ Ուրեմն նրանք ոչ մի կոպեկ չեն ծախսում ճանապարհին։ Գյուղում նրանք ստանում են օրական 1 ռուբլի 50 կոպեկ, ուրեմն 3 շաբաթում կարող են վաստակել 10 ռուբլի։

Ինչպես տեսնում եք, այդ բանվորները ոչ միայն ճանապարհի ծախսը չեն հանում, այլև 3 շաբաթում 10 ռուբլի են վաստակում։ Ուրեմն նրանք ոչ միայն ճանապարհի ծախսը չեն հանում, այլև 3 շաբաթում 10 ռուբլի են վաստակում

կան» է ու «բարերար» իր ժողովրդին, ինչպէս է թոյլ տալիս իրեն սահնալ այդ թալանի փողերից թէ ռոճիկ 100 րուբլի և թէ առաջադրութիւններով իբր ճանապարհածախս...։ Արդէն վարդապետը, տեսնելով որ սիրտը ամբողջ կազմն անպատուելուց յետոյ միայ անպատիժ, (շնորհիւ ձևական պատգամաւորութեան), խրախուսուեց և այս անգամ յարձակուեց ընդհանրապէս ամբողջ հոգևոր իշխանութեան վրայ։ Մեր կարծիքով, աթոռանաս և հոգեբաժին նուէրները ստանալը սահմանուած է հոգևոր իշխանութեան կողմից և ոչ մի մասնաւոր անհատի, հետևապէսայդ կարգադրող մարմինն է Համիդը և համէտի ճանապարհով գնացողը. մթթէ կարելի է սպասել մի գնաան եթէ ոչ տգէտ վարդապետից այդպիսի անվայել և հայհոյական խօսքեր դէպի իշխանութիւնը։ Հայը սուբլին ուղարկուած է Ալէքսանդրապոլ կարծես նրա համար, որ միշտ այս կամ այն լրագրութեանը յօդուածներ, նամակներ ու հեռագրներ տայ անպատուելով հանդերձ սրան նրան առանց ճանաչելու մեծ ու փոքր և մինչև անգամ ս. էջմիածինը, իւր ուխտը...։ Ահա չորրորդ ամիսն է, ինչ սա մեզանում է փոխանորդական պաշտօնով, չորս անգամ եկեղեցի չի գնացել։ իսկ քարոզ՝ քաւ լիցի։ միևնոյն ժամանակ նախատած է հոգևոր կառավարութեանը. չդիանք իրեն ինչ կարծելով չի բարեհաճում առանց իմնել, այլ հրամայում է որ կառարուելիք թղթերն իւր մօտ առարուին։ եկեղեցի չգնալ, ժողովրդեանը քարոզ չլսուել, որը մեր ժողովրդի սրտին ամենամօտ բանն է, առանց նշմել, ապա ինչ, միմիայն գիշեր ցերեկ մատնել միջոցներ գտնել էջմիածինը քանդելու. այդպիսի վարդապետի մեր ժողովուրդը չի պահել ոչ մի ժամանակ։ Եւ իսկապէս քաղաքացիք, տեսնելով սրա անպէսքութիւնն ու կործանիչ արարքը, հեռագրով խնդրեցին Վեհ. Հայրապետին անմիջապէս հեռացնել Ալէքսանդրապոլից Արսէն վարդապետին։ Մեր կողմից բարեկամաբար խորհուրդ կըտայինք Արսէն վարդապետին գնալ այնպիսի մի տեղ, որտեղ ժողովուրդն էջմիածնի հետ կապ չունի և տուրքեր էլ չեն տալ, այն ժամանակ կերեսն իւր ծրագիրը կատարուած կըտեսնէր...։

Կ. Մ.

Ալէքսանդրապոլ, 4 ապրիլի

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՏՆԵՈՒԹԻՒՆ, 6 ապրիլի.—Գաւառում գիւղը կատարեալ գժոխք է դաժել. խաւարային մշուշն աւելի ուժեղ է պատել պատերազմական գըրութեան պատճառով. ամեն մի թըշուառ իւր անտակտ խօսքից կրակն է ընկնում։ Ռնգակշռութեան ոչխ միջամտութիւնը չէ տեսնում կեանքի իրական ճշմարտութիւնները. սուր մարդկանց սպարէզը բաց է. նրանք երևան են ընկել իրենց նոզկալի սարսմունքով. իշխանութիւնը չեներում է նրանց այլանդակ սարսանութիւնների, մատնութիւնների վրայ։

Բէն, ոնց, սահելութիւնամնութեք եռում է, և թշնամանքն աւելի ու աւելի է սաստկանում։ Ո՞ր է հայ բանաստեղծի «թշուառին միշտ թըշուառն է մխիթար» խօսքերի էութիւնը։ Թշուառը թշուառին չէ խնայում, մինչև իսկ եղբայրը եղբօր դէմ, բարեկամը բարեկամի դէմ դաւեր է հնարում։

Շուրջդ տիրում է բամբասանք, զրպարտութիւն—հայ գիւղի հնամենի և անդադրում չարիքներից մէկը, որ այս ցաւագար տենդային օրերում ամենայն արագութեամբ յառաջադիմում, զարգանում է։

Իրերի այս դրութեան մէջ ոստիկանութեան պաշտօնավար-կարգապահները՝ ինչ-որ մի փառասէր չաղթական քրքիջ երեսներին՝ իրենց լիազօր են ձեացնում գիւղական ժողովրդին նեղացնելու և ճնշելու մէջ. և ինչ գիւղին խաղեր ասես, որ չեն խաղում անճարացած ու անպատսպար ժողովրդի գլխին։ Նրանք մաքները ծուռ, արիւնն աչքերը կոխած, խանձակիւռ և բարդութիւններ առաջ բերելու ծարաւով գրաւուած՝ զօրով մտնաներ է որ վիտուում են. իսկ մեր անիծուած ժամանակի մտնանեներն էլ շատ, հանգամանքներն ու պատահարներն անթիւ, դրութիւնը նպաստաւոր...

Եւ ինչեր չեն կարող պատահել...

Ուստի բիւրոկրատիայի անհերթի կամայականութեան դոհ չդառնալու և պէս-պէս խայտառակութիւնների չենթարկուելու համար, գիւղացիք ջանում են ամեն կերպ հաճոյանալ, շոյել, վայելել ամենատեսակ ցածր ատիճանաւորի։

Սակայն այդ նպատակի կեցութեամբ արդեօք կը փրկուենք այս չարաբաղդ կեանքից. արդեօք գլխներիս վերև կախուած դամոկլեան որև սարսափելի վտանգը կը հեռացնենք մեզանից անշարժ մնալով, առանց ձայն, առանց շնչելու։

Եւ այդպէս հայ գիւղացին երկիւղած նենգ մէկնաղարից՝ սպատղակ խեղդող դրութեան մէջ՝ մոռանում է նոյն իսկ իր սովալուկ ընտանիքի կենսականը հոգալ ուր մնաց համայնական կարիքները, որոնք վաղուց հայ գիւղի համար գաւ-լի չեն եղած, իսկ այս դառն օրերին այդ կարիքները, ընդհանուրին վերաբերող գործերը բոլորովին սառած փտացած են։ Չէ որ ոյրմելի գիւղացի մարդը պատրաստ է աւելի շուտ անհատապէս չարչարուելու, դեզերուելու, քան իր կաշկանդուած միտքը հանրային շահերի համար զբաղեցնելու։

Վերջինս որքան ցաւալի է, նոյնքան իրականութիւն։

Այսպէս 1904 թ. ձիշտ ապրիլի 7-ին քանդուել է Հայ-Գեւտգաո գիւղի եկեղեցին. ուրեմն սոյն տարուայ ապրիլի 7-ին լրանալով երկու տարին՝ անցնում է վրայ երրորդը, ինչ Հայ-Գեհադաոը զուրկ է եկեղեցուց։ Գիւղացիների կողմից մինչև օրս եկեղեցու վերակառուցման վերաբերմամբ ոչ մի վճռական փորձ չի եղել

Եւ եկեղեցու շինութեան չսպառումը, ձիշտ է, մեկ կողմից կարելի է վերագրել հասարակութեան չքաւոր լինելուն, որ անկարող է սեպհական միջոցներով նոր եկեղեցի շինել, բայց միւս կողմից՝ չեմ կարող չնկատել՝ այդ ժողովրդի անձիաբանութիւնն է, կամ էսօր-էգուց գնալը, մասամբ և նրա անտարբերութիւնը դէպի այդ ձեռնարկութիւնը։

Ամեն անգամ գիւղական խորհրդում, երբ խօսք է լինում եկեղեցու շինութեան մասին, իսկոյն սկսում է ամենուի բարձրանալ, թէ եկեղեցու փողերը կերան երէցփոխները, քահանան և այլն. և եկեղեցու շինութեան համար նուիրած խորհրդակցութիւնները մեզանում ընդ միշտ անցել են անշունչ և անհետանք, չնայած հայր գործակալ Վերանանցի այդ առթիւ անձամբ արած յորդորներին։

Թէ երէցփոխները որքան իրենց դերի մէջ են եղել և ինչ ատիճան մաքուր են եղել եկեղեցական հաշիւների նկատմամբ՝ այդ կէտում ես չեմ ուզում երկարել. սակայն պէտք է ասել, որ կասկածանքն ու բամբասանքը երէցփոխների վրայ գիւղում մի ժամանգական սխտ է։ Հաշուետուութիւնը միշտ կարելի է, բայց տեղի անտեղի կասկածանքն ու բամբասանքը, կարծում եմ, լաւ երէցփոխին էլ վատացնում է։ Թէկուզ բիր մի սուրբ մարդ նշանակիր երէցփոխ, որը և ինչքան կուզէ անաղարտ պահէ իրեն եկեղ. հաշիւների մէջ՝ գործեալ գիւղացիք կը բամբասեն ասելով՝ «ժամի փողն ուռում է հա ուռում»։

Բայց ինչ մեծ տուրքեր կան եկեղեցուն և որքան բարդ են այդ հաշիւները, որ առանձին մարդիկ ուռուն, ընդամեն եկամուտը 20—30 րուբ. ոչ աւելի։

Ինչ և իցէ. այդ կողմից այսքանը միայն պարզ է, որ մեր եկեղեցու ապառիկ թէ առձեռն, նոյն իսկ կէսը և չկէսը փողերով չի կարելի եկեղեցի շինել։

Եթէ դրութիւնը նոյնը մնայ, 200 տնից բաղկացած անագին գիւղը դեռ մի քանի տարիներ հոգևոր հանդիսակատարութիւններից անմասնութեամբ կը մնայ։

Թեմիս սրբազ. առաջնորդի ուշադրութիւնն ենք հրաւիրում Հայ-Գեհադեհաի նոր եկեղեցու կառուցման առթիւ։ Զէ որ մեր կարիքներին աւելի արագաց պիտի հանդիսանայ մեր հոգևոր կառավարութիւնը, ցոյց տալով իւր անկիրճ հոգատարութիւնը։

Հարկաւոր է մոլորեալ և լքեալ ժողովրդին հնարաւորութիւն տալ օր առաջ իրագործած տեսնելու իւր փափագը՝ նոր եկեղեցու շինութիւնը. անհրաժեշտ է իրական օգնութիւն, աջակցութիւն։

Աւելորդ չեմ համարում յիշել, որ եկեղեցու բացակայութիւնը նպաստում է տգէտ ժողովրդի վատ հակումները զարթնելուն, իսկ այն անախորժութիւններն ու տարակուսանքն, որ պատում է քահանային եէ՞ժողովրդին եկեղեցական այլ և այլ ս. խորհուրդների ժամանակ՝ թողնում եմ ընթերցողն ինքը խմանայ։

Գիւղիս ծխ. դպրոցի ուսուցիչը Զատկի շաբթի առաջ հինգշաբթի օրը աշակերտների հետ միասին ս. հաղորդութիւն ընդունելու համար տոիպուած նպաւ ճանապարհանել մօտ չորս վերստ հեռաւորութեան վրայ գտնուած ս. Գէորգ մատուռը, որտեղ գիւղիս քահանան այդ նպատակով պատարագ էր մատուցանում։

Հայ-Գեհադեհաը չունի և ուսումնարանի յատուկ շէնութիւն. այս տարուայ շէնքը դպրոցական ահաղին անյարմարութիւն է ներկայացնում. վարձուած է ուսումնական տարին 20 րուբ., բայց փոքր ի շատէ դըպրոցի պատշաճ տեղերի տանուտէրերը պահանջում են 40—60 րուբլի։

Ահներև է, թէ որքան նպատակայարմար և անհրաժեշտ էեուսումնարանի հասարակական շինութիւնը ևս։

Կատարելագործուած դպրոցն է, որ պէտք է քաղաքակրթել հայ գիւղական երիտասարդութեան տուաջ մեծամասնութիւնը, որը և ապագայում պէտք է վերացնէ իւր հայրենիքում բուն դրած չարիքները, պիտի արդիւնաւորէ իւր հայրենիքը։

Հայ գիւղացի, յանուն ապագայ քաղաքակրթութեան թողնենք իրար մէջ անընդհատ շարունակուող բամբասանքը, տաելութիւնը, թշնամանքը. զրանցից ոչ մի շահ ոչ մեղ և ոչ հասարակութեան. եկ միահամուռ ոյժերով մի սիրտ, մի հոգի դարձած անցնենք գործնական շինարար գործի. նպատակը գործին ով լինչով կարող է. ՚ի ծախ հանենք մեր ունեցածից եթէ ոչ կովեր, գոնէ մի-մի մոզի և սկսենք համայնական գործը։

Զպէտք է ներկայ ամենուրեք տեղացող խժդժութիւններն և առհասարակ խաոն վիճակը մտաի փախճան անելով անգործութեամբ ըրըտնուել։ Այդ անդիմի պատճառանութիւնները մեղ շատ հեռուն կը տանեն։

Զէ որ եկեղեցին և դպրոցը գիւղի միակ բարոյական և մտաւոր հաստատութիւններն են, մեր ազգային գոյութեան գրաւականները։

Զէ որ որքան էլ կուզէ ժամանակից կեանքը և դէպքերը տագնապից լինեն, այնուամենայնիւ անհատներն ու հասարակութիւնները պէտք է ձեռնարկեն բարելաւ գործեր։

Վերջապէս, մթթէ գիւղ ահու գեղ չեն շինուում։

Տեղեակ Տ.-Մ.

—

ԴԵՐԲԵՆՏ, 10 ապրիլի. — Ամսիս 9-ին տեղս հայոց ուսումնարանում գործակալ քահանայ Սպանդունեանցի նախագահութեամբ կայացաւ ընդարձակ ժողով, ուր քննուեց ս. սինոդի ուղարկած «քահանայացուների ընտրութեան և պատրաստութեան կանոնների» ծրագիրը։ Ժողովը, կարեւոր է ասել, այնքան էլ բազմամարդ չէր։

Նախ քան ծրագիրը քննութեան ենթարկելը հարց յարուցուեց, որ ս. սինոդն ինքն իրաւունք չունի օրէնքներ հրատարակելու, այլ այդ իրաւունքը վերապահուած է ազգային ժողովին կամ Վեհափառ Կաթողիկոսին. այս առաջարկութիւնն ընդունուեց ներկայ եղողների ձայների մեծամասնութեամբ և մտցուեց արձանագրութեան մէջ *)։

Այնուհետև սկսեցին քննել ծրագիրը և երկար թեր ու դէմ կարծիքներ փոխանակելուց յետոյ վերջապէս կազմեցին արձանագրութիւն, որից առաջ ենք բերում մի քարի գլխաւոր կէտեր։

Մի քանի փոքր գիւղեր միանում են և պահում են մի թեմական դպրոց-ըոցաւոր քահանայ, իսկ որտեղ անհնար է այդ՝ մեծ գիւղերի և քաղաքների եկեղեցիները և վանքերը օգնութեան են հասնում նրանց։

Ընտանիքի ամեն մի չափահաս անդամ (երկսեռ) ձայնի իրաւունք պիտի ունենայ։

Եթէ մի եկեղեցի է և կայ ծխատեսչութիւն, ցանկալի է որ քահանայացուն ընտրուի եկեղեցու բոլոր ծխականների կողմից։

Ցանկալի է մտցնել ռոճիկ։

Քահանան ազատ իրաւունք ունի տեղափոխելու ժողովուրդը, քանի որ ինքն է ընտրում իւր քահանան, ազատ իրաւունք ունի և հեռացնելու իւր չսիրած (?) քահանային։

Քահանայացուները պէտք է լինեն աւարտած թեմական դպրոցը։

Ձապոն

*) Ցուամենայն դէպս ժողովի գործը չէը քննել ս. սինոդի իրաւունքների սահմանը։ Հետևաբար այդ մասին արձանագրութիւնը միտք չունի Խմբ.

ՀՐԱՒԷՐ

Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը յայտնելով, որ այս ապրիլի 16-ին, կիրակի, ցերեկուայ ժամը 12-ին, նշանակուած է ծխական ընդհանուր ժողով, խնդրում է ներկայ լինել, քննելու և որոշելու հետևեալ հարցերը.

1. Զեկուցումն գործերի դրութեան մասին՝

2. Նախահաշիւ դպրոցի և եկեղեցու 1906 թ և հաշիւ եկեղեցու 1904ն թիւ.

3. Ծխական տուրքի սահմանումն.

4. Գայլանեան դպրոցի շինութեան հարցը

5 Ներս. Հոգ. ընտր. 2 պատգ. ընտրութիւնը.

6. Երէցփոխի զեկ. Յովհաննեան դպր. հոգ. ընտր. մասին.

10 ապրիլի 1906 թ.

Նախագահ հոգաբարձութեան
Հ. Առաքելեան

Անդամ-երէցփոխ
Ա. Արաստա-նեան

Անդամ-քարտուղար
Լ. Քալան-Թարեան

(175) 1—1

Ամբագիր-հրատարակիչ
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Մողնու ս. Գէորգ եկեղեցու ծխական հոգաբարձութիւնը յայտնելով, որ այս ապրիլի 16-ին, կիրակի, ցերեկուայ ժամը 12-ին, նշանակուած է ծխական ընդհանուր ժողով, խնդրում է ներկայ լինել, քննելու և որոշելու հետևեալ հարցերը.

1. Զեկուցումն գործերի դրութեան մասին՝

2. Նախահաշիւ դպրոցի և եկեղեցու 1906 թ և հաշիւ եկեղեցու 1904ն թիւ.

3. Ծխական տուրքի սահմանումն.

4. Գայլանեան դպրոցի շինութեան հարցը

5 Ներս. Հոգ. ընտր. 2 պատգ. ընտրութիւնը.

6. Երէցփոխի զեկ. Յովհաննեան դպր. հոգ. ընտր. մասին.

10 ապրիլի 1906 թ.

Նախագահ հոգաբարձութեան
Հ. Առաքելեան

Անդամ-երէցփոխ
Ա. Արաստա-նեան

Անդամ-քարտուղար
Լ. Քալան-Թարեան

(175) 1—1

ՀՐԱՒԷՐ

Ալիզուլի գիւղը գտնուում էր Զանգեզուրի գաւառում, բայց պատկանում էր Ղարաբաղի թեմին և գտնուում էր Խանքենդի գործակալութեան շրջանակում։ Ալիզուլի գիւղը ըստ մատենադաժնի 180 ծուխ էը և շրջապատուած բազմաթիւ ատրզակարաոյ քրդական գիւղերով։ Հարևան հայ գիւղերը հեռու են 30—50 վերստ հեռաւորութեան վրայ, այնպէս որ սրևէ դժարդի դէպքում անկարող էին օգնութեան հասնել։

Անցեալ սեպտեմբեր ամսում քըրդերը յարձակուեցին այդ գիւղի վրայ և անգին վնասներ հասցրին բնակիչներին՝ կոտորելով, ահռելով, հրդեհելով և թալանելով ամեն ինչ։ Օգնութիւն հայերի կողմից ալիզուլեցիք անկարող եղան ստանալու վերոյիշեալ պատճառով։

Կենդանի մնացածները, որպէսզի նորից չենթարկուին կոտորածի, որոշում են ընդ միշտ թողնել իրենց ծննդավայրը։ Նրանց այս գաղթիան բաւական նպաստում է մի կազակ սպայ, որ մի քանի կազակներով պատսպարում է նրանց։

ՀՐԱՒԷՐ

Ալիզուլեցիները ցրւում են Շուշու գաւառի հայ գիւղերում։ Նրանցից մի մեծ խումբ եկած է Խանքենդ։ Սրանք կազմում են 48 ծուխ և այսօր գտնւում են շատ ծանր, անտանելի և աննկարագրելի կացութեան մէջ, որովհետև սրանց եղած-չեղածը Ալիզուլում խլած թալանուած է։

Խանքենդցիները այդ 48 ծխին ընակարաններ տուին, նոյնպէս և վառարաններ սեռնակները տաքացնելու, որովհետև դրանք եկան նոյեմբերը ամսում։ Ուտելիքի և հագնելիքի կողմից ևս նրանք օգնութեան հասան։ Բայց շուտով խանքենդցին էլ ընդհարում ունեցաւ թուրքերի հետ. այդ ժամանակ կռնգառաւ առաւ առաւորը։ կեանքը տեղացի հայերի համար էլ դարձաւ շատ ծանր. ուտելու հայ անդամ ոչ սք չէը կարողանում ճարել։ Այս հանգամանքում Շուշու նպաստամատոյց յանձնաժողովը ալիզուլեցիներին տուաւ 500 րուբլի նպաստադրամ, որը ընդհանուր կերակրեց գրեթէ մի ամիս, և այսօր նրանք զարձեալ մահնուած են քաղցի և մերկութեան ցորտ բոլորովին չկայ, լինի՝ նրանք կաշխատեն, շատ աշխատասէր են. ոչ եղներ ունին և ոչ սերմ վարելու, այնպէս որ խնդիրը ձեռքները ծոցներում ձեացել են պարապ։

Թիֆլիսում ապրող զարաբաղցիներն ուղարկել են Խանքենդ 1500 պուդ ալիւր սովեալների համար և 1000 րուբլի փող Շուշի՝ բարձր. Ներսէս վարդապետին, եղների և սերմացուի համար։ Շուշու նպաստամատոյց յանձնաժողովի կողմից եկան երկու լիազօրներ, այսուեղ, Խանքենդում, կազմեցին ենթայանձնաժողով, որ ստացուող նպաստների համար կարգադրութիւններ և բաժանումներ անէ ամբողջ Աչէնի գաւառի տառապող ժողովրդի համար։ Երկու լիազօրները, իրենց իրաւունքով, անկարող եղան այն 1500 պուդ ալիւրից և 1000 րուբլի փողից ալիզուլեցիներին բաժին տալ, առարկելով որ դրանք արդէն 500 րուբլի առացած են, բայց, երկար ընդդիմախօսութիւնից յետոյ, խոստացան, եթէ ալիւրից աւելորդ ինայ, այդ աւելորդը տալ ալիզուլեցիների ամենածայրայեղ չքաւորներին։ Բայց արդեօք աւելորդ կըմնայ,—կարիքն այնքան մեծ է...։

Ալիզուլեցիների վիճակը շատ ծանր է, նախ նրանք անգործ են և քաղցած, ապա կատարեալ մերկ, անցեալ և տրտում վիճակում։ Երեխաները շրջում են ոտաբոբիկ, հիւանդութիւններն էլ (հազ և ծաղիկ) մի կողմից են նրանց դէմ հալածանք բարձրացրել։ Արդ յարգանքով խընդրում եմ մարդասէր ազատամարդկանց և տիկիններին օգնել սրանց ինչով որ կարող են, լինի դրամով, թէ հանդերձեղէններով (առաւելապէս երեխաների) միևնոյն է, որպիսի սրանք էլ կարողանան ապրել և մոռանալ իրենց թշուառ անցեալը։

Բոլոր նուէրների մասին ժամանակին հաշիւ կըտրուի։ Իմ հասցէն՝ Въ Уроч. Ханкенды.

Գործակալ Խանքենդի՝
Պետրոս Խահ. Skr-Յովհաննիսեանց

Խանքենդ, 5 ապրիլի

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ապրիլի 16-ին, Թանդուեան ս. Աստուածածին եկեղից ում լինելու է ծխականների ժողով երկու պատգամաւոր ընտրելու, Ներսիսեան զըպրոցի հոգաբարձական ընտրութիւններին մասնակցելու համար։ Ուստի խնդրում եմ բոլոր ծխականներին չնորհ բերել նշանակեալ ժամին ժողովին։

Գեորգ ատագ Խահ. Արուլեանց

(129) 1—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան՝ ապրիլ ամսիս 16-ին, առաւօտեան 10-րդ ժամին, էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, բոլորն էլ հրաւիրւում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնց առաջինները պարտաւոր են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու։ 12 ապրիլի 1906 թ., Թիֆլիս։

Էջմիածնեցոց եկեղեցու
Ներսես ատագ Խաճատուր Աբովեանց

(133) 1—1

№ 4711
ԿԱՊՏՕԼ
(Captol)

Մազերի համար ամենալաւ ջուր մաքրելու, թարմացնելու, ամրացնելու գլխի կաշին, ջղերը հանդարտացնելու։ Մանուանդ գլխի բեխի և նրա հետ միացած քորի և մազերն թափուելու դէմ։ Պատրաստուած է էլբերֆելդի բժշկապետ Ի. Էյխոֆֆի ցուցմունքով։

ԿԱՊՏՕԼ-ը չէ կազմում գաղտնի միջոց։

Միակ գործարանատէրը

ՖԷՐԴ. ՄԻՒԼԳԷՆՍ

Կեօլն Հաֆֆնսի վրայ և Ռիւգաս

Նորին Կայսերական Մեծութեան Արքունի մատակարար

(59356) 2—1

Լոյս տեսան

Բժ. Ա. ԲՈՒՐԴՈՒԼԵԱՆԻ

վերջին երկը նոր գրքերը՝

1. Նուէր հայ զինուորին (20 պատկ. առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը) . . . . . 20 կ.
2. Նուէր հայ վարժապետին (դպրոցական առողջապահութիւն) 20 կ.
3. Նուէր հայ գպրոցականին 10 կ.

Ուսումնարաններին, որոնք կը պահանջեն վերադիր վճարով ամենաքիչը 100 օրինակ, զեչջող. 40%.

Պահեստը Ս.-Петербургъ, Пушкинская Скоропечатная Лештуковъ пер 4. 5—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան ապրիլ ամսիս 16-ին, առաւօտեան 10-րդ ժամին, Հալաբարի ս. Գարապետ եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ, 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, բոլորն էլ հրաւիրւում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնց առաջինները պարտաւոր են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու։ Թիֆլիս քաղաքի ս. Կարապետ եկեղեցու ատաքերէց՝

Գաբրիել Խահ. Տէր-Գաբրիելեանց

(134) 1—1

ՀՐԱՒԷՐ

Կիրակի, ապրիլի 16-ին, Թանդուեան ս. Աստուածածին եկեղից ում լինելու է ծխականների ժողով երկու պատգամաւոր ընտրելու, Ներսիսեան զըպրոցի հոգաբարձական ընտրութիւններին մասնակցելու համար։ Ուստի խնդրեմ մեծ. պ պ. ծխականներին չնորհ բերել նշանակեալ ժամին ժողովին։

Գեորգ ատագ Խահ. Արուլեանց

(129) 1—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան՝ ապրիլ ամսիս 16-ին, առաւօտեան 10-րդ ժամին, էջմիածնեցոց ս. Գէորգ եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, բոլորն էլ հրաւիրւում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնց առաջինները պարտաւոր են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու։ 12 ապրիլի 1906 թ., Թիֆլիս։

Էջմիածնեցոց եկեղեցու
Ներսես ատագ Խաճատուր Աբովեանց

(133) 1—1

№ 4711
ԿԱՊՏՕԼ
(Captol)

Մազերի համար ամենալաւ ջուր մաքրելու, թարմացնելու, ամրացնելու գլխի կաշին, ջղերը հանդարտացնելու։ Մանուանդ գլխի բեխի և նրա հետ միացած քորի և մազերն թափուելու դէմ։ Պատրաստուած է էլբերֆելդի բժշկապետ Ի. Էյխոֆֆի ցուցմունքով։

ԿԱՊՏՕԼ-ը չէ կազմում գաղտնի միջոց։

Միակ գործարանատէրը

ՖԷՐԴ. ՄԻՒԼԳԷՆՍ

Կեօլն Հաֆֆնսի վրայ և Ռիւգաս

Նորին Կայսերական Մեծութեան Արքունի մատակարար

(59356) 2—1

ՀՐԱՒԷՐ

Ամառուայ Զգրաչէն սբ. Աստուածածնի եկեղեցու մեծ. պ. պ. ծխականները հրաւիրում են ժողովի կիրակի ապրիլի 16-ին ս. պատարագից յետոյ 12 ժամին, պատգամաւորների ընտրութիւնից յետոյ քննելու եկեղեցու 1905 թուականի եւմտից հաշիւները և մի քանի կարեւոր հարցերի մասին խորհրդակցելու։

Երէցփոխ՝ Ալէքսան Քալանթարեանց

(130) 1—1

ՀՐԱՒԷՐ

Ինդրում եմ ոյն ապրիլի 16-ին, կիրակի, ժամը 12-ին, գնալ ս. պատարագի, շնորհ բերել Զրկինեանց ս. կարապետ եկեղեցի՝ ծխականների ժողովին մասնակցելու, ուր, համաձայն սբբ. առաջնորդի հրամանի, ընտրուելու են՝

1) Երկու պատգամաւոր Ներսիսեան զպրոցի հոգաբարձուց ընտրութեանը մասնակցելու։

2) Հոգաբարձուներ-Զրկինեան ս. կարապետ եկեղեցու ծխական զպրոցի համար։

Ժողովին կարող է մասնակցել ընտանեքի ամեն մի սրական անդամն, եթէ տարիքը 25-ից պակաս չէ։

Մխաեէր՝ Գրիգորիս Խահ. Սերգինեանց

(128) 1—1

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Համաձայն թեմիս սրբազան առաջնորդի կարգադրութեան, ապրիլ ամսիս 16-ին, առաւօտեան, 10-րդ ժամին Բեղդէհէմի ս. Աստուածածին եկեղեցու ծխական բոլոր այր մարդիկ, 25 տարեկանից սկսած, կանոնադրութեան 6-րդ յօդուածի համաձայն, բոլորն էլ հրաւիրւում են եկեղեցի ընտրելու երկու պատգամաւոր և երկու կանդիդատ, որոնց առաջինները պարտաւոր են Ներսիսեան ազգային հոգևոր դպրոցի համար հոգաբարձուներ ընտրող խորհրդին մասնակցելու։

Թիֆլիս քաղաքի Բեղդեհէմի ս. Աստուածածին եկեղեցու ատաքերէց՝

Գէորգ քահանայ Մինասբեանց

(131) 1—1

Նորին բարձր սրբազնութիւն Թեմիս առաջնորդի առաջադրութեան համաձայն սոյն ապրիլ ամսի 16-ին բոլոր ծխական եկեղեցիներում պիտի կատարուի երկու-երկու պատգամաւորների ընտրութիւն Թիֆլիսի Ներսիսեան հոգևոր դպրոցի հոգաբարձական ընտրութեան համար. ուստի սրա նով հրաւիրում եմ չնորհ բերել քահանայ Ստեփաննոս ս. Տաճատեանցին (ս. Գեորգ եկեղեցու մեծապատիւ ծխականներին, կիրակի, ամսիս 16-ին, առաւօտեան ժամը 11-ին նոյն եկեղեցին մասնակցելու ընտրութեանն։

Ատանձին հրաւիրանքներ չեն լինելու։ Կաթուղիկէ եկեղեցու ատաքերէց

Ստեփաննոս ա. ք. Տամատեանց

(126) 2—2

Վիճակախին Կոնսիսատրեան հայոց Վրաստանի յայտնում է, թէ սոյն ապրիլ ամսի 14-ին նրա տանէն մէջ նշանակուած է անուղղ կապտոյտ տալու հիմնատար նորագութիւնն էլմինածնապատիկ «դաւեի-Ռաչի» անուանեալ տան, Վարոնցովսկի փողոցի վրայ, 6-րդ մասում քաղաքի։ Անդամ կոնսիատորիայի

Զաքարիա քահ. Զարդեկանց

(124) 3—2

№ 4711

TEINJURE POUR CHEVEUX

ՄԱԶԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԵՐԿ

ԸՆԿՈՅՉ ԷՔՍՏՐԱԿՏԻՑ

Տալիս է մազերին, լինին նրանք սպիտակ թէ չէկ, կարճ ժամանակում ցանկալի գոյնը, սկսած լոյց չէկ գոյնից մինչև սեր, և այդ պատճառով կարելի է վերականգնել նրանց կորցրած գոյնը։ Որքան յաճախ գործածուի այդ ներկը, այնքան աւելի մազերը գոյն կստանան։ № 4711 մազերի համար ներկը ընկոյզի էքստրակտից լիապէս արժանի է նախապատուելթեան գոյութիւն ունեցող ներկերից բոլոր միջոցներից, որովհետև ձի պարունակում ոչ մի վնասակար նիւթ։

Գոյները սև, կիմամոնի կամ գոլչինի գոյնի, չէկ և բոց գոյնի։ Փոքր սրսուալի գինն է 1 ր. 20 կ. Մեծ » » 2 ր.—

Ծախւում է բոլոր լաւագոյն վաճառատուներում

ՖԷՐԴ. ՄԻՒԼԳԷՆՍ

Կեօլն՝ Հաֆնսի վրայ, բաժանմունքը՝ Ռիւգասում։

Նորին Կայսերական Մեծութեան Արքունիքի Մատակարար։

M. 59354) 2—2